

ՏԵՂԱՆՔ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐՈ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Ն. Յ. ԴԻԼՄԱՐՅԱՆ

Տեղանք և ընդհանրապես բնության, տիեզերքի միավորներ նշանակող բառերը կամ բնաշխարհագրական եզրույթները հայերենի տեղանունների հիմքում ամենահաճախ հանդիպող և տարածված բաղադրիչներն են՝ սար, լանջ, քար, թունբ, գետ, լիճ... Նույնը վերաբերում է բնակավայրերի տիպեր արտահայտող բառերին՝ շեն, ավան, քաղաք, գյուղ, ուտան, գավառ, ագարակ... , նման բառաձևերից կազմված տեղանունները տեղանվանագիտության մեջ համարվում են հնագույն կառուցվածքներ կամ կաղապարներ: Ինչպես նշում է հայտնի տեղանվանագետ հայագի Էդ. Մուրզաևը. «Զի կարելի մտնանալ, որ նախնադարում մարդը լեռն անվանել է լեռ, գետը կամ լիճը՝ ջուր և այսպես շարունակ: Այլ կերպ ասած՝ տեղանունները ինչ-որ ժամանակ նույնանում էին տեղանքի աշխարհագրական միավորների կամ բնակավայր արտահայտող բառերի հետ»¹:

Հնագույն տեղանունները, որոշ պայմանականությամբ հանդերձ, արտացոլում էին անվանակոչվող երևույթի հատկանիշները և բնույթը: Ուստի տեղանվանագիտական վերլուծությունների ժամանակ կարևորվում է իմաստաբանական դասակարգման սկզբունքը, որի կիրառման դեպքում էլ առանձնացվում է տեղանքի միավորներ և բնակավայրեր նշանակող բառերից կազմված տեղանունների խումբը: Նման վերլուծությունների ժամանակ պետք է հիմնվել լեզվական քննության և համաժամանակյա, և տարժամանակյա մեթոդների վրա, որովհետև հնագույն անվանումներում տեղանքին կամ բնակավայրերին առնչվող բառերը երբեմն սուբստրատի արտահայտություն են և ժամանակակից լեզվամտածողությամբ չեն գիտակցվում որպես այդպիսին, դրանք տվյալ լեզվի կազմավորման հիմքում ընկած նախալեզուներից պահպանված բառաձևեր են: Վերջիններս չափազանց կարևոր են հայ ժողովրդի պատմության վաղնջական շրջանի իրողությունների բացահայտման տեսանկյունից: Հայերենի պարագայում դրանք կարող են լինել ասիանիկ լեզուներից կամ ուրարտեանից ժառանգված բառեր: Այս կառույցները համաժամանակյա քննության դեպքում կարող են ընկալվել իբրև բառակազմական կամ բառահարաբերական ձևույթներ՝ ածանցներ, վերջավորություններ, որոնք կորցրել են իրենց նախնական իմաստը:

Հայերենի տեղանունների այս խմբի տարժամանակյա լեզվական քննության ուշագրավ փորձ է Գր. Ղափանցյանի «Հին Հայաստանի տեղանվանագիտության պատմալեզվական նշանակությունը» հոդվածը, որտեղ կարդում ենք. «Տեղանունների խմբավորումը և համեմատական ուսումնասիրությունը էապես նպաստում է պատմական Հայաստանի տեղանքի անունների ծագումնաբանության հաջողված ըմբռնմանը: Իսկ այս դիտանկյունը վիթխարի նշանակություն ունի տեղանունների ձևավորման սոցիալ-քաղաքական պայմանավորվածությունը, ինչպես նաև նրանց գաղափարական, լեզվաբանական և հատկապես էթնո-գենետիկական բնույթը որոշելու համար: Մենք խնդիր ենք դրել իր ամբողջության մեջ հին հայկական տեղանվանագիտությունը օգտագործել իբրև հումքային նյութ կամ աղբյուր Հայաստանի հնագույն պատմության վերականգնման գործում»²:

Մեր հոդվածի խնդիրն է համաժամանակյա քննության ենթարկել հայերենի տեղանունների ձևիմաստային այն խումբը, որն ընդգրկում է տեղանքի միավորների և

¹ Э. М. Мурзаев. Очерки топонимики. М., 1971. с. 122.

² Г. А. Капанцян. Историко-лингвистические работы, т. 2, Ер., 1975, с. 63.

բնակավայրերի անուններից կազմված անվանումները: Տեղանքի միավորների կամ բնակավայրերի տեսակների ընդհանուր անունները հատուկ անուն դառնում են հետևյալ եղանակներով՝ *ա/* եզրույթն ուղիղ ձևով վերածվում է տեղանվան՝ *Դաշտ, Ջրվեժ, Գետափ, Անձափ, Բյուր, Աղբյուր, Արեգ, Հանր, Ավազան, Լեռնանցք, Ոստան, Օճն, Ավան, Բերդ, Գավառ, Ագարակ**... օտար լեզուներով՝ *Դաղ, Գյոլ, Դարա, Քենդ*... Այս միաբաղադրիչ տեղանունների խմբում զուտ բառակազմական տեսանկյունից միավորվում են և պարզ արմատական, և ածանցավոր, և բարդ, և բարդ ածանցավոր բառեր՝ *Ժայռ, Ամրոց, Աստղաբոյլ, Աստղաբոյլք*... , բայց սրանք բոլորը տեղանվանական տեսանկյունից պարզ կազմություններ են: Այս կերպ ստեղծված ուղիղ տեղանունները մեծաթիվ չեն և հիմնականում բոլորը հին պատմական անվանումներ են, այսինքն՝ տեղանվանակերտման այս կաղապարը այժմ գործուն չէ, բացառյալ միկրոտեղանունները:

բ) Տեղանք կամ բնակավայր նշանակող բառերին ավելանում են տարբեր ածանցներ՝ տեղ ցույց տվող, նվազափաղաքական... այս եղանակով կազմված տեղանուններն առավել տարածված են: Ինչպես օրինակ՝ *Բերդակ, Լանջապատ, Գետիկ, Արևիկ, Անձափապատ, Աշխարհիկ, Աստղիկ, Ծովակ, Օճնիկ, Անտառուտ, Անտառապատ, Լեռնուտ, Լեռնապատ*... Լեզվի համաժամանակյա բնության տեսանկյունից տվյալ շարքին կարող ենք դասել նաև գրաբարյան «ք» հոգնակիակերտով կազմությունները, որոնք բավական մեծաթիվ են:

«Ք» բաղադրիչն աշխարհաբարում արդեն կորցրել է հոգնակիության իմաստը՝ վերածվելով բառակազմական ձևույթի՝ *Լիճք, Գետք, Ջովք, Աղբերք, Տեղք, Անձրևք, Հողք, Շողք, Արևիք, Ոսկիք*... Արդի հայերենի հոգնակիակերտ մասնիկները՝ «եր, ներ» հազվադեպ են դառնում տեղանվան բաղադրիչ՝ *Շարան քարեր, Շատչեր-Շատչերք, Շողեր, Հողեր, Եռաթմբեր* և այլն:

Տեղանք, բնության երևույթներ կամ բնակավայր նշանակող բառերի թեք հոլովաձևերն առանձին երբեք տեղանուն չեն դառնում, միայն բառակապակցության կազմում, ինչպես՝ *Բերդաց ձոր, Բերդաց փոր, Ոստանայ լեռ, Ոստանայ գետ, Ոստանայ հովիտ*... Սրանք էլ , ինչպես տեսնում ենք, գրաբարյան հոլովաձևեր են, ընդ որում՝ միայն սեռականի հոլովաձևեր, որոնք արտահայտում են պատկանելություն, սերում կամ վերաբերություն: Ծարախյուտորեն դրանք հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններ են:

գ) Հայերենի զարգացման գրեթե բոլոր շրջաններում կենսունակ է եղել և է բառաբարդմամբ տեղանուն ստեղծելու եղանակը: Չափազանց շատ են այն բարդ բառ տեղանունները, ուր բաղադրիչներից նվազագույնը մեկը, հաճախ երկուսն էլ տեղանքի կամ բնության միավոր, բնակավայր նշանակող բառեր են: Օրինակ՝ *Կաթնաջուր, Կաթնաղբյուր, Կաթնագյուղ, Կաթնասար, Ծաղկառու, Ծաղկասար, Ծաղկահովիտ, Ծաղկաբերդ, Ծաղկածոր, Գետափ, Գետավան, Գետահովիտ, Գետաշեն, Եռաբլուր, Եռազագաթ, Կայքար, Աստղասար, Արևաբլուր* և այլն: Այս կաղապարով տեղանունների շարքը կարելի է շարունակել գրեթե անվերջ, որովհետև յուրաքանչյուր բառ-միավորով հնարավոր է կազմել մինչև մեկ տասնյակ մոտ տեղանուն, երբեմն ավելի, և բոլորն էլ հայերենի կանոններից համապատասխան, բարեհունչ:

Ճույց տալու համար այս կաղապարի գործունակությունը՝ առանձնացնենք Հայաստանի բնաշխարհագրական պատկերին բնորոշ և տեղանքի տարածված միավորներից ու բնակավայրերի տեսակ նշանակող բառերից կազմված տեղանունների որոշ շարքեր**՝ *Աղբյուր - Ակնաղբյուր, Գեղաղբյուր, Լանջաղբյուր, Լուսաղբյուր, Խաչաղբյուր, Յոթնաղբյուր, ...Այր - Բազմայր, Բարևայր, Հոռոմայր, Դիցայր, ...Առու - Բազմառու, Երեջառու, Թեժառու, Թաղկառու, ...Ավան - Արեգավան, Դիցավան, Դիվավան (այս բաղադրիչը տեղանուններում հաճախվում է նաև հնչյունակախված ձևով՝ վան՝ Արջեվան, Թխեվան, Գոջեվան...), ...Ափ - Արազափ, Արմափ, Գետափ, Դիվափ, Զառափ, ...Բերդ - Աղամաբերդ, Ազնվաբերդ, Ազնաբերդ, Աղյուծաբերդ, Բազկաբերդ, Խոժոռոբերդ, ...Բլուր - Արևաբլուր, Աստղաբլուր, Արջաբլուր, Բողբլուր, Գայլաբլուր, ...Գետ - Գարեգետ,*

* Այսուհետ քննվող տեղանունների հիմնական աղբյուրը «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» 1-5-րդ հատորներն են, Եր., 1986-2001թթ.:

** Տեղի սղության պատճառով գլխաբառերը տալիս ենք հաջորդիվ:

Դեղձնագետ, Իշխանագետ, Մոփագետ, ... Գյուղ - Ափնագյուղ, Ամիրագյուղ, Բերդագյուղ, Միջագյուղ (այս բառը տեղանուններում հանդես է գալիս նաև իր բարբառային «գեղ» տարբերակով՝ Աբնագեղ, Աղվեսագեղ, Եզդագեղ...) ... Գոգ - Ամպագոգ, Աստղագոգ, Երկնագոգ, ... Դաշտ - Ակնադաշտ, Դարանադաշտ, Դողադաշտ, Հավադաշտ, Մեղրադաշտ, ... Թաղ - Աղաթաղք, Գինթաղք, Դարնանաթաղ, Մափաթաղք, Հոռաթաղ, ... Թումբ - Գութանաթումբ, Թառաթումբ, Երիցաթումբ, ... Մակ - Բազմածակք, Գազանածակք, Երկնածակ, Լեռնածակ, ... Կայան - Ագրոկայան, Խճուղակայան, Լուսակայան, ... Կատար - Արծվակատար, Եռակատար, Լուսակատար, Լինկատար, ... Հանք - Արծաթահանք, Աղահանք, Գանձահանք, Երկաթահանք, Զիթահանք, ... Հող - Եղծափող, Միրանափող, Մմակափող, Զիթափող, ... Հովիտ - Այգեփովիտ, Արջափովիտ, Բալափովիտ, Գառնափովիտ (այս բառը տեղանուններում երբեմն սղում է իր սկզբնահնչյունը՝ դառնալով ովիտ՝ Աղիովիտ, Արնովիտ, Թրովիտ, Կոզովիտ, Արճիշակովիտ), ... Հուն - Երասխահուն, Հազարահուն, Օհկահուն, Կեռահուն, ... Տափ - Դարատափ, Երնջատափ, Եղնատափ, Խաչատափ, Հոռիտափ, Տավարածատափ, ... Քերծ - Ավանաքերծ, Արծվաքերծ, Անգեղաքերծ, Բարձրաքերծ...

Տեղանվանակերտման այս կաղապարի ուսումնասիրությունը երևան է բերում մի հետաքրքիր լեզվական իրողություն. «քար», «սար», «ձոր», «ջուր», «հովիտ», «հող», «աղբյուր», «լանջ» և նմանատիպ աշխարհագրական եզրույթներն արդի հայերենի տեղանուններում աստիճանաբար կորցնում են իրենց իմաստային բովանդակությունը՝ վերածվելով տեղանվանակերտ ձևույթների, զուրկ իմաստային բեռնվածությունից: Եթե «շեն», «ավան», «բերդ» բնակավայրի տեսակ ցույց տվող բառերն ավելի վաղ էին կորցրել իրենց բառարանային իմաստները՝ տեղանուններում վերածվելով զուտ տեղանվանակերտ բաղադրիչների, ապա այժմ նույն գործընթացը տարածվում է տեղանքի միավորներ նշանակող բառերի վրա: Այսօր «Բերդաքար» կարող են կոչվել այնպիսի տեղանքի հատվածներ կամ բնակավայրեր, ուր ոչ բերդեր են եղել, ոչ քարեր և այսպես շարունակ՝ Բերդահիստ, Բերդաձոր, Բերդահովիտ... Այսինքն՝ անգամ սկզբնաբաղադրիչը ձևույթի արժեք է ստանում:

Այս երևույթը հատկապես նկատելի է քսաներորդ դարավերջից, երբ Հայաստանի անկախացման և ազգային-հայրենասիրական վերելքի տարիներին սկսեցին վերանվանվել նախ՝ օտարալեզու, հիմնականում թուրքական ծագման բավական մեծաթիվ տեղանունները, ապա՝ համայնավարական գաղափարախոսության արգասիք անունները: Դրանց փոխարեն, լեզվակաղապարներին տուրք տալով, նախկինում աղբյուրաբանական գյուղերը հախտուն վերանվանեցին արհեստածին *Մաղկահովիտ, Լուսահովիտ, Բարձրահովիտ, Լանջահովիտ, Ջրահովիտ*... պայմանական անուններով: Կարծում ենք, որ պետականորեն այս հարցին կարելի է ավելի ճիշտ լուծում տալ՝ գտնելով, վերականգնելով այդ տեղանունների բուն հայկական հիմնավորը անվանումներն ու ձևերը, ինչը կատարվեց Կապանի, Աշոցքի պարագայում, երբ այսպես վերանվանվեցին Դափանը և Ղուկասյանը:

Ընդհանրապես հաճախակի կրկնության դեպքում համասեռ եզրաբաղադրիչները սկսում են ըմբռնվել որպես ձևույթ-ածանցներ: Այս երևույթն առկա է նաև այլ լեզուներում, օրինակ՝ ռուսերենում լիմաստ «град, город, городок, поле, дар, мир» և այլ բառերը դարձել են տեղանվանակերտ ձևույթներ, նույնը վերաբերում է հունական ծագման «պոլիս» բառին, որը միջազգայնացել է՝ *Պավլոգրադ, Ջելենոգրադ, Իվանգորոդ, Վելիկոգորոդ, Գուլյայպոլե, Միրյամպոլե, Կրասնոդար, Սոլնցեդար, Ժիտոմիր, Վիկոմիր... Միննեպոլիս, Ինդիանապոլիս*՝:

դ) Բառակապակցություն հանդիսացող տեղանուններ. այստեղ աշխարհագրական եզրույթները և բնակավայրերի տեսակ արտահայտող բառերն ունեն տարբեր խոսքի մասերից (զոյական, ածական, թվական, դերբայ) ծագող որոշիչներ՝ հոլովված և անհոլով, ինչպես նաև հատկացուցիչներ: Օրինակ՝ *Առաջին գյուղ, Երրորդ գյուղ, Առաջին մաս, Երրորդ մաս, Առաքելոց ձոր, Այծից քար, Գազանայ լեռնանցք, Լեռնանցքի ջուր, Կարմիր*

³ Տե՛ս А. В. Суворанская, Структура имени собственного, М., 1969, էջ 101-103:

բյուր, Կապույտ լիճ, Գառնոյ լիճ, Քարի լիճ, Չոքանի լեռ, Չոքանի գյուղ, Սատանի լեռ, Նշխարաց գետ, Ծեկ քար...

Որոշիչ- որոշյալ կառույցներն անվանակոչված օբյեկտի նկարագրություններն են՝ անվանադիր հանրության կողմից առանձնացված հիմնական հատկանիշի շեշտադրմամբ՝ Սառն աղբյուր, Երկար գետ, Թթու ջուր, Ոսկեչեն դաշտ, Ծեն գավիթ, Չքնաղ լեռներ...

Ա. Սուպերանկայան բառակապակցություն տեղանունները կոչում է բազմաբառ տեղանուններ: Նման տեղանուններում բաղադրիչների կապը կարող է լինել և՛ համադասական, և՛ ստորադասական, և՛ ստորոգումային (այսինքն՝ նախադասությունը դառնում է տեղանուն): Հատկացուցիչ - հատկացյալ կառույցներում շեշտադրված է անվանակոչվող օբյեկտի վերաբերությունը կամ պատկանելությունը՝ Նոյի գերեզման, Նոյյան տապանի լեռ, Ծահանդուխտի մատուռ, Ծամիրամայ բերդ, Ծամիրամայ ջուր, Ծահույնանի հանքեր, Նալբանդանց կամուրջ, Ծահենենց ձոր... Այս տիպի կազմությունները հայերենում բավականաչափ գործուն և տարածված են, բայց ոչ այնքան, որքան «գ» ենթակետինը:

Հնգեվորպական լեզուներին, ի մասնավորի հայերենին, ստորոգումային կապակցությունների տեղանուն դառնալը բնորոշ չէ: Համադասական բառակապակցությունները ևս հայերենում հազվագյուտ են տեղանվան արժեք ձեռք բերում: Տիպականը և տարածվածը վերոնշյալ ստորադասական լրացում - լրացյալ կապակցություններն են:

Տեղանքի միավորներ նշանակող բառերի դերը միարժեք չէ տարբեր կարգի տեղանունների կազմավորման գործընթացում: Դրանք խիստ գործուն են ջրանունների և լեռնանունների ստեղծման պարագայում, բայց նվազ կիրառելի են բնակավայրերի անվանումների ձևավորման ժամանակ: Բացի դրանից՝ տեղանվան այս բաղադրիչները ժամանակի ընթացքում ընկնում են, գործիքնակ՝ Ծուշան լեռը դառնում է Ծուշան, Ոսկան գետը՝ Ոսկան, Տատիկ գետը՝ Տատիկ, Ծամիրամի բերդը՝ Ծամիրամ և այլն: Թեև այստեղ պետք է փաստել, որ տեղանքի միավոր նշանակող բառերը, աշխարհագրական եզրույթները բարդ և բաղադրյալ տեղանունների բովանդակային հիմքն են կազմում, որովհետև նրանցով է որոշվում տեղանունների իմաստային բնույթը: «Արջասար» տեղանունն ընկալվում է որպես լեռնանուն «սար» եզրույթի շնորհիվ, իսկ Տատիկ գետը Տատիկ լեռնագագաթից տարբերակվում է իր երկրորդ բաղադրիչի միջոցով: Տեղանվանագիտական գրականության մեջ տեղանքի աշխարհագրական եզրույթները տարբեր կերպ են բնորոշվում դրանք և՛ բառ-ցուցիչներ են, և՛ վարչական բառեր, և՛ ժողովրդական, հասարակ անուններ կամ generic term, որ բացահայտում են անվանակոչվող օբյեկտի սեռը, տեսակը՝:

Երբ տեղանքի միավոր աշխարհագրական եզրույթի իմաստային բովանդակությունն էապես նեղանում է, այն վերածվում է զուտ տեղանվան: Բնավ պատահական չէ, որ աշխարհի խոշորագույն անապատների անունները՝ Սահարա, Գոբի, Կարակում... առաջացել են «անապատ, ավազուտ հարթավայր» հասարակ գոյականներից: Այսպիսով, տեղանքի աշխարհագրական եզրույթները բանալի են բազմաթիվ՝ հատկապես վաղնջական տեղանունների ստուգաբանության և ծագումնաբանության համար:

Իսկ բնակավայրերի, երկրների, քաղաքների ու գյուղերի անվանումները ծագումնաբանորեն հիմնականում բխում են էթնոնիմներից (ցեղանուն-տոհմանուն), ինչպես նաև անձնանուններից և ազգանուններից այն մարդկանց, որոնք էական ազդեցություն են գործել տվյալ երկրի, պետության կամ քաղաքի հիմնադրման, զարգացման, գոյատևման գործընթացում՝ Հայք, Վիրք, Վաղարշապատ, Տիգրանակերտ, Դավիթ-Քեկ, Ծավարշակյան, Արշակավան, Դավթաբերդ...:

Բնակավայրերին հատուկ է նաև տեղաբնակների շրջանում գերիշխող հիմնական զբաղմունքից, մասնագիտություններից, նրանց մականուններից ածանցված անուններ ստանալը, այս երևույթը հատկապես տարածված է միկրոտեղանուններում՝ Գուսանագյուղ, Նալբանդենց գյուղ, Դարբանց գոմեր, Հովվաշեն, Քարտաշավան, Հեքիմաշեն, Սարկավագաց գյուղ, Աբեղաձոր, Որսկան, Երկաթահատաց գյուղ, Խոզնապահ, Տկլորաշեն, Մեղրակեր, Աչքահան, Ծավակահան, Մեփագործների, Գաջագործների փողոցներ...

՝ Տե՛ս Զ. Մ. Мырзас, նշվ. աշխ., էջ 97-99, А. В. Сунеранская, նշվ. աշխ., էջ 93-106:

Բնութագրական է տեղանվանագետ Յու. Կարպենկոյի դիտարկումը. «Ուսումնասիրողը միշտ պետք է ձգտի գտնել իրականության մեջ այն հատկանիշը, որը խթան, ազդակ է դարձել անվանման ծննդյան պահին, սա չափազանց կարևոր է տեղանվանագիտության համար: Միայն իմաստաբանության ոլորտից դեպի իրական աշխարհ անցման դեպքում է անելանում տեղանվան ծագման շուրջ տիրող մշուշը: Աշխարհագրական անունների քննության այս եղանակով ենք հնարավորություն ստանում պատասխանել այն հարցին, թե ինչ պատճառներ, պատճառահետևանքային կապեր ունեն տեղանունները»⁵: Հետևաբար տեղանունների փոփոխության երևույթին պետք է վերաբերվել մեծ վերապահությամբ, դրա համար պետք է լինեն հույժ ծանրակշիռ հիմնավորումներ՝ օտարամուտ, ոչ հայեցի, անբարեհնչյուն և արհեստածին, այսինքն՝ ժողովրդի կողմից չընդունված լինելը, և ոչ թե տվյալ ժամանակի իշխանությունների կամայական որոշումը, մոդայիկ հովերը, ինչի զոհը, ցավոք, հաճախ են դարձել հայոց տեղանունները, և խախտվել է պատմական ժառանգորդականության սկզբունքը: Տեղանուններին վերաբերող հարցերում պահպանողականությունը լավագույն նշանաբանն է:

Н. А. ДИЛБАРЯН - Слова, обозначающие формы рельефа и населенные пункты в армянских топонимах. - Топонимы, образованные из местных географических терминов и слов, обозначающих населенные пункты, образуют одну из самых больших и распространенных групп в топонимическом семантическом поле. Слова, обозначающие населенные пункты и формы рельефа, - основа топонимики, так как они определяют смысловое содержание топонимов. Это древнейший метод образования топонимов, который продуктивен и сейчас. В статье исследуются модели таких топонимов, дается их следующая классификация: 1) однословные топонимы, где различаются две подгруппы - простые производные и сложные топонимы, 2) многословные топонимы, словосочетания. Доказывается, что при частом повторении однородные конечные элементы - слова, обозначающие населенные пункты и формы рельефа, теряют семантику и переходят в категорию формантов, как будто лишенных смысловой нагрузки.

⁵ Ю. А. Карпенко. Взаимосвязь географических терминов и топонимов. "Вопросы географии", вып. 81, М., 1970, с. 67.